

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 43

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 16

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ֆրանկ: Թղթասարի ծախսը հսկայագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ղ. ԲՈՒԱՏ.— Ծաղիկեբանական պէտպիտութիւններ. Վարդը. Մշակութիւն և Իսկու-թեան պատրաստութիւնը:

Ղ. ԲՈՒԱՏ.— Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Բուրդ:

Ղ. ԲՈՒԱՏ.— Թարմ կարագի անվթար պահպանումը:

Ղ. ԲՈՒԱՏ.— Երամարուծութիւնը Բասթօռեան դրութիւնով. Մակաբուծային Փոխան-ցիկ հիւանդութիւններ. Փտախտ:

Հերմիտէ.— Ամբակսւմ աղային բանթալոնը. (մեր բարձրէն իրական պատմութիւն):

ՏԱՆՏԻԿԻՆԸ.— Խոհանոցի Բաժինը. Թիւնիկ ձուկէ, Էլն .ի պատրաստութեան եղանակները:

Տ. ՊՕԶԱՃԵՍՆ.— Դիտական Խնդիրներ:


Ազգային լուրեր.

Հանելուկ, Թղթակցութիւն, Ազդ Էլն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Այի Ճաւառէսի, Թիւ 4



1. Բայ մը ներգործական.
2. Գետ մը ի Ռուսիա.
3. Կմախքի մէկ մասը.
4. Քաղաք մը Տրապիզոնի Կուսակալը-թեան մէջ.
5. Ամառ մը անուն.
6. Ափրիկեան երկիր մը.
7. Միջերկրականի մէջ կղզի մը.
8. Բոյս մը.

Երբ առաջին գրերն կարդանք 1էն սկը-
եալ մինչեւ 8, պիտի գտնենք աշխարհի 5
մասերէն մին, իսկ իւրաքանչիւր բառի վեր-
ջին գրերն երբ կարդանք դարձեալ մէկէն
սկսելով պիտի տեսնեմք Բորթուկալցի հռչա-
կաւոր նաւարկուի մը անուն:

Պէշիկթաշ

Յ. Պ. Զ.

ԼՈՒԾՈՒՄ ԹԻԻ 22 ՀԱՆՔԼՈՒԿԻՆ

1— Լ ի Լ Ք ա ը տ ի Ֆ —2

Ի ս Լ ա ն տ Ա

Վ է ն է Բ

Ի ց է

Ն

Հ ա Կ

Ա դ Լ ա Ս

Յ ո ւ ո ո ւ թ

4— Թ ա փ ա ո ա կ ա ն —3

1. Քաղաք ի Ֆուսնա և յԱնգլիա. «Լիլ,
Քարտիֆ»:

2. Մեծ կղզի մը Ալբանիանի մէջ. «Ինլանտա»

3. Լիճ մը Եւրոպայի մէջ. «Վէնէր»

4. Զայնարկութիւն.

«Իցէ»

5. Տառ մը.

«ն» (այսինքն նա)

6. Մեծ ծրար մը.

«Հակ»

7. Լեռ մը Ափրիկէի մէջ.

«Ալլա»

8. Կանարգական բառ մը. «յու ութ» (թը-
լլալով):

9. Ասոր անդ ժամանակ անցնող. «Թալա-
ռական»:

1-2=Ամերիկացի խուզարկու. «Լիլինկոթն»

2-4=Եւրոպացի բնագէտ. «Ֆարինհայթ»

Ներկայ հանելուկը լուծած է միմայն Օր.
Զապէլ Յ. Ետընճեան՝ Այալնէն:

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

ՆՈՐ Բաժանորդներու. — Մէկ քանի ան-
ձինք, թերթիս բաժանորդ գրուելու հա-
մար մեզի նամակներ ուղղած են. կը խընդ-
րուի իրենցմէ որ՝ հաճին բաժնեգինը Կ(Ն)Նիկ
զրկել. առանց այս պայմանի գործադրու-
թեան, չենք կրնար ԹԵՐԹ զրկել:

Քէսապ. — Ս. Պօլիկեան էֆ. — Հալէպ
նամակ զրկած ենք Ձեր հասցէին:

Զարչանգա. — Գ. Պ. Վարդեան էֆ. — Պ.
Մեղրոնեան էֆ. ի թերթիւր կը զրկուին. Ձեր
հաշիւը մէկ եռամսեայ է: Նոր բաժանորդաց
համար՝ պէտք է որ բաժնեգինը անպատճառ
կանխիկ զրկեն:

Մալաթիա. — Յ. Թիֆթիկճեան էֆ. —
Նոյնպէս՝ պէտք է բաժնեգինները կանխիկ
զրկել. ամեն պարագայի մէջ թերթս օգոտա-
կար կրնայ ըլլալ իր շարունակութեան մէջ,
մասնաւորապէս Ձեր հարցումներուն նկատ-
մամբ: Ինչպէս մենք ամեն տեսակ զոհողու-
թիւն յանձն կ'առնենք, մեր Պատ. Բաժա-
նորդներն ալ պէտք է որ ժամանակին իրենց
բաժնեգինները վճարելով, գէթ այս կերպով
զմեզ քաջալերած ըլլան, որպէս զի մենք ալ
ամենայն գոհունակութեամբ և հաճութեամբ
պատասխանենք:

Գօնեա-Ագչէհիր. — Գ. Էօլմէզեան էֆ.
զրկուեցաւ մէկ նախաշաբաթ Հնդկաստանի,
և մէկ էտիլեանի Մանկական երգեր. գին
10+6=16 զուրուշ:

Իգմիր. — Գործակալութիւն. — Սաացանք

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ՐՈՒԱՏ

Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 43

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 16

ԾԱՂԿԵԲԱՆԱԿԱՆ ՊԷՍՊԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԴԸ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՍԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ (*)

Անյիշատակ ժամանակներէ ի վեր, այդ հմայիչ ծաղիկը կը մշակուէր նախապէս Արեւելեան երկիրներու մէջ, ուրկէ տարածուած է աշխարհիս ամեն կողմը առհասարակ: Չի կայ բուրսատան մը, ուր վարդը դոյութիւն չունենայ, չի կայ ծաղիկ մը՝ որ վարդը գերազանցէ, և ոչ իսկ անոր հաւասարի: Ծաղիկներու նախատիպարն է ան, բուրսատաններու կայս թագուհին, օժտուած այն ամեն հրապուրիչ յատկութիւններով, զորս մարդ կը փնտռէ ծաղիկ մը վրայ. յանկուցիչ փայլ ու պայծառութիւն, չլմարիչ պերճանք, կուսական զդիւխի թարմութիւն, դոյնի դիւ-

դիչ կենդանութիւն և արտայայտուն նրբութիւն, հեշտաբոյր անուշահոտութիւն:

Մարդը՝ երկրիս վրայ դոյութիւն ունենալէն ի վեր, սիրած է միշտ վարդը, ամեն տեղ և ամեն առերես:

Գեղուհիները կը գուրգուրան անոր վրայ, սիրահարները կը փնտռեն զայն, բանաստեղծները կ'երգեն, և իր անունը նուիրագործած ու յաւերժացուցած են: Չի կայ ազգ մը, որ վարդի նուիրուած անուն մը, դոյն մը, նմանութիւն մը չունենայ: Բանաստեղծին համար Գուրունը՝ «վարդերու եղանակ»ն է, դեռաւոր օրիորդը իր դեռաբողբոջ թարմութեան մէջ վարդն է. կայր՝ իր այտերու հրապուրիչ գոյնը վարդէն փոխ առած է, իր շրթունքները անով ներկած է. կուսաշնորհ պարկեշտութիւնն է վարդը. երագափայտ գեղեցկութիւնն է՝ որ ասուպի մը պէս կ'անցնի կ'երթայ: Բայց վարդը առանց փուշի լի՞նչ է որ. անպաշտպան դողդոջուն ծաղիկ մը, որ անձնատուր կ'ըլլայ ձեռք կարկառողին՝ առանց ընդդիմութեան. ճիշտ այն

(*) Վերջիշեալ հարցումը ուղղած էր մեզ իզմիւրէն՝ Մ. Ն. Միքայէլեանէ ք.

տրուեստական անփուշ վարդերուն պէս՝ զորս այսօր քաղաքակրթութիւն և մշակութիւն կ'արտադրեն. որոնք սակայն, չունին նախորդին ոչ հեշտաբոյր անուշահոտութիւնը, և ոչ ալ այն զգլխիչ բնական թարմութիւնն ու հմայքը: Սիրեցէք վարդը իր փուշերով, աղջիկը իր պարկեշտութիւնով:

Բայց մարդիկ չի գոհանալով միմիայն վարդի տեսքէն, և անոր վաղանցուկ հըրպոյրէն, սկիզբէն ի վեր հետամուտ եղած էին, անոր անուշահոտ իսկութիւնը քամել առնել, և գործածել զայն իրենց պերճանքին և հաճոյքներուն: Տասներորդ դարուն մէջ Ալիսէն անուն նշանաւոր եգիպտացի բժիշկը հաղիւ թէ կը յաջողի վարդի նրբահոտ ջուրը պատրաստել թորելով (իմպիկէ քաշել), և պահել զայն երկար ատեն: Այդ թուականէն սկսեալ, ամբողջ Արեւելքի մէջ արագութեամբ տարածուեցաւ վարդեջուրի պատրաստութիւնը և գործածութիւնը: Կերեւի թէ՛ 12րդ դարու միջոցները խիստ մեծ քանակութեամբ կը պատրաստուէր, որովհետեւ՝ այդ ատենները երբ Սուլթան Սալտուսին Նուսադէմ մատու, Սուլթան Էսմէր մըղկիթի պատերը վարդեջուրով լուսւոյ տրուած է:

Վարդի իսկութեան (կիւլ եաղը) գիւտը եղած է 1612 թուականին, ըստ ուանդութեան, Պարսկաստանի կողմերը Շիրազի մէջ, ալքիմիայով զբաղող հայու մը կողմէ: Այդ միջոցին, իսկութեան ռէկ քաշը կը ծախուէր 800 էն 900 ոսկիի, և մինչեւ իսկ հաղար:

Կը պատմուի նոյնպէս թէ, Մանկուեան վեհապետներէն ձիհան-Կիր՝ Նուրի ձիհան իշխանուհոյն հետ ամուսնացած ատեն, քաղաքին ամեն կողմերը վարդեջուրով ողողելէ վերջ, քաղքին մէջէն և պալատին քովէն անցնող գետակի մը մէջ անընդհատ վարդեջուր կը թափէին. Նուրի-ձիհան իշխանուհին՝ այդ

միջոցին ջուրին երեսը կանաչադոյն և թանձր խաւ մը կը նշմարէ, և կը հրամայէ խնամով հաւաքել զայն ջուրին երեսէն, որ ուրիշ բան չէր, բայց եթէ նոյն ինքն վարդեջուրը, որ գետի ջուրէն թեթեւ ըլլալով, երեսը բարձրացած էր. և վարդեջուրը այն ատեն կոչուեցաւ իշխանուհոյն անունով, Նուրի-ձիհան սուլթ:

Արեւելքէն Արաբիա անցաւ վարդի իսկութիւնը պատրաստելու ճարտարարուեստը, և Թունուզի մէջ մասնաւորապէս Ժողովուրդին գլխաւոր մէկ զբաղումը կը կազմէր. ուրկէ՞ Պուլկարիս՝ Գըզանլըքի կողմը ներմուծած է Թուրքիացի մը՝ 17րդ դարուն մէջ: Երկար ատեններ Գըզանլըքի մէջ սահմանափակ մնաց վարդի մշակութիւնը, և իր իսկութիւնը պատրաստելու արհեստը. 1840 թուականէն սկսեալ, Գըզանլըքի չըջակայ գեղերը շահագործուելով վարդի մշակութեան, սկսան իրենց կողմերը մշակել, որ տարածուեցաւ մինչեւ Թունուզա:

Չորս տեսակ վարդ կը մշակուի՝ իսկութիւն պատրաստելու համար. Ա. Սպիտակ վարդը. — Բ. Չորս եղանակներու (եէտի վերէն) վարդը. — Գ. Մըշկահոտ վարդը. — Դ. Մշտադաւար վարդերին:

Բերքաղը (récolte) կը կատարուի եգիպտոսի մէջ՝ Մարտ ամսոյ վերջերը. Ֆուանա՝ Մայիսի սկիզբները. Բարիդի չըջակաները Կոկոին Մայիսի վերջերը: Յերեկ ատեն երբեք չեն քաղեր, այլ միայն առաւօտուն և երեկոյին:

Եգիպտոսի մէջ 100 քիւօ վարդի թերթերը կուտան հաղիւ թէ 30-40 կըրամ իսկութիւն. Ֆուանայի հարաւային երկիրներու մէջ, և մասնաւորապէս Բըւովանի մէջ՝ նոյնչափ թերթերէ կ'առնուի 8-10 կըրամ, իսկ Բարիդի մէջ հաղիւ թէ 2, և առ առաւելն 4 կըրամ:

Արեւելքի մէջ, 100 քիւօ վարդի թերթ և 80 քիւօ ջուրէ կ'առնեն 48 քիւօ վարդեջուր:

Այժմ վարդի իսկութիւնը չառ քիչ տեղեր կը պատրաստուին: Եղիպոսո՛ր հին աստեղները հռչակ հանած էր վարդի իսկութեան քանակի և որակի մասին, այժմ գրեթէ ոչինչ կ'արտադրէ. և գրեթէ միմիայն Մէտինէթ-էլ-Ֆայում մի մէջ կը պատրաստուի մէկ քանի տեղեր: Շիրազի մէջ բոլորովին դադարեցուցած են:

Արտագրող երկիրներն են գլխաւորապէս, Ֆուսիս (Քան, Նիս, Կուս), Պալկարիա (Գըզանլըք) և Հնդկաստան (Կադիրուր):

ԳԸՁԱՆԼԸՔԻ ՎԱՐԴԻ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ. — Վարդի իսկութիւնը կը պատրաստուի այժմ ամեն տեղէ աւելի այս երկրին մէջ, որ Ֆիլիպէէն 16 ժամ հեռաւորութեամբ փոքր քաղաք մ'է, ունի ընդարձակ հովիտ մը, և կը կոչուի Վարդաստաններու հովիտը, որ հիւսիսային կողմէն Պալքաններէն, և հարաւէն ալ Քարաճաճաղ լեռներէն շրջապատուած է: Հովիտին մէջտեղէն կ'անցնի Թուսնա գետը, որու մէջ կը թափուին անհամար առուակներ:

Բերքաղը կ'սկսին, երբ առաջին կոկոնները բացուին, որ տեղի կ'ունենայ Մայիսի առաջին երկուշաբթիներուն մէջ: Այգուն կանուխ՝ տակաւին տրեւը հորիզոնին վրայ չերեւցած, կիներ և աղիկներ ընդհանրապէս՝ կ'երթան խումբ խումբ գէպի վարդաստանները, և մէկ քաջը 5 փարայի հաշուով կը քաղեն, մինչեւ որ արեւը բարձրանայ հորիզոնին վրայ:

Միջին հաշուով 1200 վարդը մէկ քաջ կը կշռէ. և տեղական մէկ արտավար տեղէ կը քաղուի 300 քաջ վարդ, որ կ'ընէ՝ վեր ի վերայ 360,000 վարդ:

Բերքաղը կը տեւէ, տարւոյն եղանակին տաքութեան աստիճանին համեմատ 3 էն 5 շաբաթ: Խիստ տաք և չոր օդերը աննպաստ են վարդերու բերքաղին ժամանակ, որովհետեւ՝ գրեթէ վարդաստանի բոլոր վարդերը մէկէն կը

բացուին, իրենց հոտը կը կորնցնեն, և բերքաղը խիստ կը դժուարանայ, ինչպէս և իսկութեան պատրաստութիւնը:

Երբ բացուած կոկոնները արեւին մնան, յետ մասամբ իրենց հոտը կը կորնցնեն. տհա այս պատճառաւ առաւօտուն խիստ կանուխ՝ երբ տակաւին արեւը չէ բարձրացած, և ցօղի կաթիլները վարդի թերթերուն վրայ չէ իջած, բերքաղի կ'սկսին: Ամպամած և մեղմ օդը աւելի նպաստաւոր է բերքաղին:

Քաղսղները վարդի թուփերուն վրայէն կը փրցնեն բոլոր նոր բացուած կոկոնները, իրենց բաժակով մէկտեղ (տաւի կանաչ մասով), որովհետեւ՝ այս բաժակը կարեւոր դեր մը կը խաղայ թուփի առեւ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վերջը: Իւրաքանչիւր քաղող, ծաղիկները կը լեցնէ հեղձեմէ իր գոգնոցին մէջ, կամ ձախ թեւը անցուցած կողովին մէջ, որ լեռնալուն պէս կը կը պարպեն մեծկով պարկերու մէջ: Այս պարկերը՝ որոնք վեր ի վերայ 20 քաջի չափ վարդ կը պարունակեն, իսկոյն թորանոց կը տարուին, ուր՝ մաւաններու մէջ, կամ զով և զոց տեղ մը կը տարածեն 8-10 հարմեթ (սանթիմ) թանձրութեամբ, և եթէ չի կրնան իսկոյն թորել, մինչեւ երկու օր կը պահեն հոն:

Ըստ կարելոյն կը ջանան, քաղուած վարդերը միեւնոյն օրը թորանոցէն անցընել, որովհետեւ՝ մնալով իրենց հոտը կը ցնդի, և իսկութեան արտադրութիւնն ալ կը նուազի:

(Շար.)

2. FOLUS

Պարաբերին չի վճարող բաժանորդներուն կը յիշեցնենք մեր Զեկոյցը:

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆԾԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ

Կարգ մը կաթնաու կենդանիներու մարմինը և մասնաւորապէս ոչխորինը, ծածկուած է տեսակ մը մազով, որ բուրդ կը կոչուի: Բուրդը թէև տեսքով մազէն կը տարբերի, բայց մազին մէկ տեսակը կարելի է սեպել զայն: Մէկ քանի կենդանիներ միեւնոյն անգամ թէ բուրդ և թէ մազ ունին, և շատ հաւանական է որ, ոչխարն ալ՝ իր վայրենութեան մէջ այնպէս ըլլար. որ հետզհետէ ընտելացման մէջ մազերը կորսնցունելով, բուրդը աւելի շատցած է:

Կլիման, տեսակը, սնունդը և տածման եղանակը մասնաւոր ազդեցութիւններ ունին բուրդի որակին վրայ:

Ոչխորի բուրդը կը ըլլայ՝ կամ երկայն, ուղիղ, հաստ, կոշտ և մազի տեսքով, ինչպէս են մասնաւորապէս Անգլիական Լէյսէսթէր և Լէնգօլնշիր ելն. տեսակները, որոց կը մերձենան մեր տեղական Գարամանը և Գըվըրճըքը: Եւ կամ՝ կարճ, գուռ, բարակ և կակուղ, ինչպէս Մէրինոսի բուրդը: Միեւնոյն կենդանիին բուրդը, մարմնոյն սա կամ նա մասին վրայ իրարմէ խիստ որոշ տարբերութիւններ կ'ունենայ. և բուրդը զատուղ գործաւորը միեւնոյն գեղմին (toison = եւփաղը) տարբեր որակ ունեցող մասերը իրարմէ կը զատէ:

Բուրդի ֆիզիկական կազմակերպութիւնը խիստ յատկանշական է. որով և կ'որոշուի զիւրութեամբ բուռային հիւսուածքութեան: Դուրսի կողմէն կալումուած է շատ մը բճիճներէ. և երբ մանրադիտակով քննենք, կը տեսնուի որ՝ երկու կամ երեք մասերէ բաղկացած է:

Ա. Արտաքին բճիճները՝ իրարու վրայ դրուած տանիքի մը կղմինտրներուն պէս, բայց տնկանոն ձևով և հեռաւորութիւնով, եղջերակերպ կեղեւներու կամ շերտակներու կը նմանին: Այդ կեղեւներու վերին ծայրերը վերի վերոյ ազատ են, իսկ վարի ծայրերը թերին մէջը մխրճած կ'երեւին: Մերինոսի

բուրդին մէջ, կեղեւները ճաղառի (խուռի) ձևը ունին, որոնք մէկըմէկու մէջ ազուցուելով, ամբողջովին բուրդին մէջի թելը կը շրջապատեն: Մազերու կեղեւները աւելի խորանկ մխրճուած և աւելի ստափակ են, որոց խիստ մէկ փոքր մասը դուրս մնացած է ազատ:

Բուրդի այս արտաքին կեղեւներու շարուածքը մեծ դեր կը խաղայ թաղկապմութեան (քէշէ) և ասուէշինութեան (շուխա) մէջ, գործողութեան տոհմ հախաղիր կեղեւները իրարու ընդերքուգլուցով:

Բ.—Բուրդի ներքին մասը՝ որ արտաքին կեղեւէն անմիջապէս վերջը կուգայ, և գրեթէ ամբողջութեամբ ներքին մասը կը կազմէ, իլաճեւ երկայն բճիճներէ կը բաղկանայ: Այս կազմութիւնը՝ որ բուրդի թերին ներքին մասին թելաճեւ կերպարանք մը կուտայ, իր այս կերպարանքը աւելի որոշակի կ'երևի, եթէ քիչ մը ծծմբական թթուութեամբ տաքցուի:

Կարևոր է նշոնակել թէ, երբ այս ներքին թելաճեւ բճիճները բաղաւժուած վիճակի մէջ գտնուին, գունատու նիւթերու հետմիանալու մեծ յարմարութիւն կ'ունենան՝ քան արտաքին բճիճները: Այս պատճառաւ՝ այլ և այլ աղբակներու ներգործութեամբ իրենց արտաքին խաւը կորսնցունող բուրդի թելերը կը ներկուին աւելի շուտ և աւելի մոյգ (խոյի), քան սովորական խալ բուրդը:

Գ.—Բուրդի կեղրոնակուն մասը՝ կը բաղկանայ տարանկեանաճեւ կամ խորանարդաճեւ (թավուի գարի պէս) բճիճներէ, որոնք թերին ծածը կը կազմեն, որ երբեմն թերեւու մէջ՝ վերէն մինչեւ վար կ'երկարի, երբեմն տեղ տեղ ընդհատուած կը գտնուի, երբեմն հազիւ մէկ ծայրը. և գերընտիր տեսակէ եզրղ (ինչպէս մէրինոս) բուրդերու մէջ գրեթէ գոյութիւն չ'ունենար:

Երբեմն բուրդեր կան՝ որոնք ընտիր բուրդի թելերու սովորական կողմը չեն ունենար, կեղեւները անորոշ կը ըլլան, կամ իրարու խառնուած ըլլալով, չեն տեսնուիր. և թերին ամբողջ նիւթը անթափանցիկ կ'երևուի: Այս տեսակ բուրդերը զիմացկուն չեն ըլլար, փայլունութիւն չունին, չեն թաղկապիր (քէշէ-լէնմէք). և ներկուելու անընդունակ կ'ըլլան:

Ալբակա, վիկոն, Լաֆա կոչուած ուղտայ-
ծերն ալ մետաքսանման բուրդեր կ'արտադ-
րեն, և կը գործածուին այլ և այլ կերպա-
տէր շինելու, որոնք բուրդը արտադրող կեն-
դանեաց անունով կը ճանչցուին:

Կան նաև մէկ քանի տեսակ այծեր, ո-
րոնք տեսակ մը բուրդ կ'արտադրեն, ինչ-
պէս Անկորայի այծը, Գաշմիր, և կը գոր-
ծածուին նմանապէս ընտիր տեսակէ կերպա-
տէր, ցիտիներ եւն. շինելու:

Ուլտի տեսակ ալ կը գործածուի, որ
գարնան միջոցին մազերուն տակ կը կապուի:

Այս բուրդերու մէջ՝ մասնաւորապէս մօ-
հէր (Անկորայի այծի բուրդը այսպէս կը կոչ-
ուի), ալբակա, գաշմիր, ուլտի տեսակը,
Պարսկական բուրդը՝ բուրդ գլուզ գործաւոր-
ներու ստալովութեան կը փնտռեն: Ասոնք կը
պարունակեն ընդհանրապէս տեսակ մը ման-
րապիտային յօրինում, (ածխական պասիլ)
(bacillus anthracis), որ արջառներու և ձի-
երու մէջ, փայծաղային տենդ (տաւաք սրժ-
մաք) յառաջ կը բերէ: Այդ պատիւը օգին
մէջ կը տարածուի բուրդերը գլուած ատեն,
որ թոքերուն մէջ մանեղով, արեան տեսակ
մը թունաւորում յառաջ կը բերէ: Բուրդ
գլուելու սահմանուած աշխատանքները ըն-
դարձակ և օգտաւոր ըլլալու են, և աշխա-
տութեան ժամանակ ալ, գործաւորները
պէտք է քթերին և բերանին դոց պահեն,
որու համար՝ Եւրոպայի բուրդ գլուելի մաս-
նաւոր գործիք մը կը գործածեն շնչառու-
թեան համար:

ԲՈՒՐԴԻ ՖԻԶԻԳԱԿԱՆ ՅՍՏԿՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ. — Խոնաւառութիւն. — Բուրդի թելը
մեծ քանակութեամբ ֆուր կրնայ ծծել, ա-
ռանց խոնաւ երեւելու: Չոր և տաք ժա-
մանակ, բաց օդի մէջ դրուելով, 100ին 8էն
10 խոնաւութիւն կը պարունակէ միշտ, և
երբ խոնաւ միջնոլորտի մը մէջ դրուի, 100ին
30էն մինչև 50 խոնաւութիւն կ'ստանայ: Չի
մոռնանք ըսելու թէ, խոնաւ բուրդը՝ բու-
սային թելերու պէս չի մգլտորի դիւրու-
թեամբ:

Անուշայ բուրդի խոնաւութեան աստի-
ճանը կախում ունի իր պարունակած ճար-
պոյցին նիւթի քանակութենէն, որ որչափ
շատ ըլլայ, այնչափ քիչ խոնաւութիւն կը
ծծէ:

Բուրդի այս խոնաւառութեան յատկու-
թիւնը բուրդ ծախող վաճառականներու հա-
մար օգտակար, և մինչև իսկ խարդախու-
թեան միջոց մը կրնայ ըլլալ. ուստի՝ բուրդ
աւնողները պէտք է այս պարագան լաւ նը-
կատուութեան առնեն, չի խաբուելու: Հա-
մար: Եւրոպայի գլխաւոր քաղաքներու մէջ,
կառավարութիւնները մասնաւոր պաշտօնեա-
ներու միջոցաւ, պաշտօնապէս՝ ծախուած
բուրդի խոնաւութեան աստիճանը և պարու-
նակած օտար նիւթերու քանակը կ'որոշեն,
և այդ որոշման համաձայն, բուրդի գինը
կ'որոշուի: Պաշտօնապէս՝ բուրդի խոնաւու-
թեան որոշ աստիճանը պէտք է ըլլայ 18,25
առ հարիւր:

Երբ բուրդի թելերը տաք ջուրի մէջ ըն-
կըցմէ՝ կը կակուղնան, և եղջիւրի նիւթին
պէս «հաստղական» (plastique) յատկութիւն
մը կ'ստանան. այսինքն՝ ինչ ձեւ որ տրուի
իրենց, պազելէն վերջը կը պահեն նոյնը:

Բուրդը արտաստվոր կերպով առածից է,
և իր այս յատկութիւնը ոչ միայն իր գան-
գուրածեւ կազմէն յառաջ կու գայ, այլ նաև
իր քաղաղութենէն և կողմակերպութենէն:

Բուրդի խոնաւառական և հաստղական
յատկութիւնները մեծ դեր կը խաղան, ներ-
կերը հաստատուելու, շոգիացնելու, և ասուե-
ղէնները յարգարելու, և թելերը մանեղու
գործողութեանց մէջ:

Նոյնպէս՝ ճնշումի, շփման, բարեխառ-
նութեան և վերը յիշուած յատկութեանց
(կեղծի տկերպ մակերեւոյթ, գանգրածեւու-
թիւն, խոնաւառութիւն, առաձգականու-
թիւն և հաստղականութիւն) հաւաքական
ազդեցութիւնը մեծ դեր կը խաղայ թափե-
կազմութեան և ասուեղէնները լմելու գոյ-
ծողութեանց մէջ:

Բուրդի փայլունութիւնը շատ փոփոխա-
կան է. ուղիղ, ուղիւրի բուրդը մազի տեսքը
ունի, և մերինոսի գանգրակերպ բուրդէն
աւելի փայլուն կ'ըլլայ: Այս տարբերութիւնը
յառաջ կու գայ կեղեւներու դիրքէն և թա-
փանցկութեան աստիճանէն: Որչափ այդ
կեղեւները տափակցած ըլլան, այնչափ մի-
եւնոյն յատակագծի ուղղութեան վրայ գլու-
նուելով, աւելի ողորկ և փայլուն կ'երեւան:
Վերին աստիճանի մետաքսային փայլունու-
թիւն ունեցող բուրդերը, ինչպէս անգլիա-

կան Լէնգօն և Լէյսէսթէր տեսակները, կը կոչուին փայլուն բուրդ, անիայլ բուրդէն որոշելու համար:

Փայլուն բուրդը՝ ինչպէս ըսինք, մազի տեսքը ունի, անիայլ բուրդէն աւելի եղջերակերպ նիւթ կը պարունակէ, և դիւրութեամբ չի ներկուիր: Այլի տեսակ բուրդը անգոյն կ'ըլլայ, բայց ստորին տեսակէ եղջերակերպ բուրդերը ընդհանրապէս դեղնագոյն կ'ըլլան և երբեմն ալ սեւ, թուրի կամ շիկագոյն: Այս բնական գոյները արեւու լոյսի ազդեցութեան չեն կրնար դիմադրել այնչափ, որչափ կը կարծուի առհասարակ ժողովրդեան մէջ, ինչ որ դիւրութեամբ կարելի է հաստատել: Երբ գեղը (եափաղը) գետնի վրայ տարածելով ուղղութեամբ դիտուի, պիտի տեսնուի թէ՛ ուղղակի լոյսի ազդեցութեան տակ գոնուած մասերը գունատ են:

Այլի բուրդ մը կը ճանչցուի իր յատկութիւնները լաւ դիտելով, որ հետեւեալներն են. կակղութիւն, տոկունութիւն, թելերու երկայնութիւն, գանգրաձեւութիւն, առաձգականութիւն, դիւրաթեքութիւն, գոյն, և ներկուելու տրամադրութիւն:

Ողջ կենդանիին վրայէն խուզելով առնուած բուրդը աւելի ընտիր կ'ըլլայ, քան թէ մորթուած կամ մեռած կենդանիի մորթէն առնուածը, զոր զատելու համար կիրի կամ կրաջուրի ազդեցութեան կ'ենթարկեն ընդհանրապէս, ինչպէս խաղախորդարաններու (տապալաղհանէ) մէջ: Եթէ այս վերջինները փոխանակ կիրի ազդեցութեամբ զատելու, ողջ կենդանիի նման խուզեն և բուրդը այնպէս առնեն, այն ատեն նախորդին կը հաւասարի:

Ըսենք անցողակի թէ, կիրի ազդեցութիւնով զատուած բուրդը, պէտք է նախ ջրաքլորային թթւում (թուլ բուհը) պարունակող ջուրի մէջ թողուլ, յետոյ մաքուր ջուրով լուալ և այնուհետեւ ճարպային նիւթերը զատելու գործողութեան ենթարկել:

Շար.

Ղ. ԲՈԼԱՏ

ԹԱՐՄ ԿԱՐԱԳԻ ԱՆՎԹԱՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

— ԵԹԵԸ —

(Շարունակում. Դէս Թէս 42)

Երկար ատեն անվթար և թարմ պահելու համար, պէտք է երրորդ պայմանին գոհացում տալ:

Մանրէները, այդ անհունապէս փոքրիկ և անտեսանելի էութիւնները պէտք է ոչընչացնել, և չի թողուլ նաև որ նորեր անոնց տեղը բռնեն:

Արէն հետեւեալ միջոցը կը յանձնարարէ, որ՝ եթէ ճշտապէս գործադրուի, լաւ կը յաջողի:

Ինչպէս ըսինք՝ կարագը թարմ, անարատ և չոր ըլլալու է. առաջին պայմանը այս է: Առէք ապակեայ շիշեր, որոց բերանը սովորական շիշերու բերնէն աւելի լայն ըլլալու է, ճիշտ Եւրոպայէն եկած պահածոներու շիշերուն պէս: Կտրագը կտոր կտոր ընելով, փայտէ մաքուր դգալով մը, կամ եթէ կ'ուզէք մաքուր փայտի կտորով մը լեցուցէք շիշերուն մէջ, որպէս զի կարագը փայտին չի փակի, քովերնիդ երկու աման դրէք, որոց մէկին մէջ տաք, խի միւսին մէջ պաղ ջուր ըլլալու է. փայտէ գանակնիդ կամ դգալնիդ նախ տաք ջուրին մէջ դրէք, յետոյ հանելով պաղ ջուրին մէջ, և անկէ հանելով կրնաք գործածել ձեր կարագը առնելու համար. երբ տեսնէք որ, քիչ ժամանակ վերջը կարագը կ'սկսի փայտին փակիչը, կրկին նայն գործողութիւնը կատարեցէք:

Պէտք է ունենաք նաև ծայրը կլորացած փայտ մը ևս, որ տոյման կը կոչուի, և որու տրամագիծը շիշին բերնէն փոքր ըլլալու է. այդ տոյմանով մերթ ընդ մերթ կարագը ծեծելու և ճնշելու է այնչափ՝ որ մէջը պարագ տեղ կամ օդ չի մնայ: Այսպէս երբ մինչեւ բերանը լեցուի, այն ատեն խցանով գոցեցէք ամրապէս. այնպէս որ, երբեք օդ առնելու տեղ չունենայ: Յետոյ առասանով կամ երկաթեայ բարակ թելերով խցանը ամրապնդեցէք, այդ թելերը խաչաձեւ պըրկելով. և այս գործողութեան վերջն ալ, շիշին բերանը ամրոջովին կնքագոգեցէք կնքամամով:

Մինչեւ հոս, այլ ևս կրնաք վստահ ըլլալ

թէ, ոչ օդը՝ և ոչ ալ իր մէջ գտնուած մանրէները չեն կրնար ներս թափանցել. բայց առաջուց թէ՛ կարագին մէջ, և թէ՛ շիշին ներքին շրջապատը գտնուած օդին մէջ մանրէներ կային, որոնք յարմարագոյն առթի մը տակ սերնդաւորելով, կը բազմապատկին, և մեր վերը ակնարկած կոգեկան խոնորումը առջ կը բերեն: Ահա ճիշտ ասոնք ոչնչացնելու համար, հիմա պէտք է հետեւեալ գործադրութեան ենթարկել կարագը:

Յարմարագոյն կաթնայ մը, սառն մը կամ նոյն իսկ քարիւղի անաղագոծ թիթեղէ սընտուկ մը առէք. շիշերը մէջը շարեցէք, նախապէս անտուկին տակը դնելով յարդ (մանրուած ըլլալու չէ, այլ երկայն), կամ եթէ չի գտնաք, խոտ կամ պտեր (սաղ). պաղ ջուր լեցուցէք անտուկին մէջ, մինչեւ շիշերուն բերնէն երեք մատի չափ վար: Դրէք այժմ անտուկը կրակի վրայ, և տաքցուցէք, մինչեւ որ ջուրը եռալ սկսի. այն ատեն կըրակէն վար առէք, և թողուցէք որ ջուրը սրպի. ուրիշ վերջը շիշերը մէջէն դուրս կը հանէք, կը չորցնէք և զով տեղ մը կը պահէք:

Ահա այս կերպով կրնաք երկար ատեն ձեր կարագը թարմ պահել, առ նուազն 6 ամիս, եթէ վերոյիշեալ գործողութիւնները ճշտիւ կատարէք: Բայց այս միջոցը ձեզի քիչ մը երկար կամ դժուար երեւայ թերեւս. այդ պատճառաւ ուրիշ միջոցներ եւս ցոյց տամ, և ըստ հաճոյս որոշեցէք անոնցմէ մին:

Մ. Պոէօն հետեւեալ եղանակը կը յանձնարարէ, որ առանց տաքցնելու, միւսնոյն արդիւնքը կրնաք ձեռք բերել:

Կարագը միշտ անարատ և թարմ ըլլալու է, ինչպէս վերը բացատրեցինք. միւսնոյն եղանակով լեցուցէք շիշերուն մէջ, կամ եթէ կ'ուզէք, մասնաւորապէս պատրաստուած անագազոծ երկաթեայ թիթեղէ տուփերու մէջ (տեսէք ասոնց պատրաստութիւնը, Հանրազնութեան սննդեղէնները պահելու վրայ գրուած յօդուածներուն մէջ). բայց այս անգամ պէտք չէ մինչեւ բերանը լեցնել. շիշերը մինչեւ իրենց պարանոցը, իսկ տուփերը՝ բերնէն մէկուկէս հարմէթրի (սանթիմ) չափ վար. կարագին երեսը հաւառարցուցէք. և առաջուց լոծեցէք մէկ քաշ ջուրի մէջ մէկուկէս տրամ տորտական թթւում (ա-

սիտ թառթուիք) և նոյնչափ ալ նատրոնի երկրնածխատ (պիքաուդօնադ տը սուտ). երբ շիշերը կամ տուփերը պատրաստ ըլլան, այդ լոծուածքէն լեցուցէք մինչեւ բերանը. շիշերը խցեցէք, ճիշտ Արէօի դրութեան մէջ բացատրուած եղանակով. իսկ տուփերն ալ, պահածոներու մասին բացատրուած եղանակով (Հանր. թիւ 31, 32, 33 էլն.):

Գործածութեան ժամանակ, հարկ չի կայ ըսել թէ, բերանը բացուելէն վերջ, վրայի հեղուկը պարպելու է, որու տակը գտնուած կարագը իր ամբողջ թարմութիւնը պահած կ'ըլլայ:

ՍԿՈՎՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ. — Սկովտիացիք հետեւեալ եղանակը կը գործածեն իրենց կարագը պահելու համար, որ կ'իտով չափ թարմ կը մնայ երկար ատեն:

Մէկ քաշ կարագի համար սռէք 12 տրամ բարակ, չոր և մաքուր աղ. — 6 տրամ բոլակ (կիւվէրիլէ) նոյնպէս փոշիացած. — և 6 տրամ ալ փոշիացած չաքար. ասոնք իրար խառնեցէք, և կարագին հետ մէկտեղ թրեցէք, մինչեւ որ լաւ մը իրար միանան. բայց մաս մը այդ խառնուրդէն նախապէս մէկ կողմ դրէք. այսպէս աղած կարագը լեցուցէք շիշերու, բլուղներու (գազանօղ) կամ թիթեղէ տուփերու մէջ, և վրանին ծածկերէ մէկ կողմ դրուած խառնուրդով, և գոցեցէք բերանին վերը յիշուած եղանակներով: Այս բաղադրութիւնը թէ կարագին աւելի անուշ և նուրբ համ մը կուտայ, և թէ երկար ատեն անվթար կը պահէ, առանց աղի կարագի համը և յասկութիւնը տունելու:

Ուռուական թթւումը (ասիտ պալիսիլիք) և նատրոնի ուռուատը (սալիսիլատ սը սուտ), երկուքն ալ ընտիր հակաանթիշներ են. եթէ թարմ կարագին մէջ, մէկ քաշին կէս տրամ դնելով, լաւ թրէք և այնպէս ամաններուն մէջ պահէք, վերը յիշուած եղանակներով, երկար ատեն իր թարմութիւնը կը պահէ կարագը, առանց համը փոխելու:

Անդղիացի կարագաւաճառները մէկ քանի տարիներէ ի վեր ընտրելագոյն միջոց մը կը գործածեն իրենց կարագները երկար ատեն թարմ պահելու համար, որ հետեւեալն է:

Կարագը լաւ մը լուալ և չորցնելէն վերջը (նախապէս մեր յիշած եղանակներով), մա-

սերու կը լսածնեն. զորօրինակ՝ իւրաքանչիւրը 50, 100 տրամնոց, աւելի կամ պակաս, որչափ որ կ'ուզէք, որոնց կէս նարնջի ձեւը կուտան: Առաջուց կէս քաշ ջուրի մէջ 1 ապուրի դգուլ չաքար լեցուցէք, կրակին վրայ եռացնելով, եփ մը տուէք և վար առէք:

Պատրաստ ցնեցէք խիստ կակուղ և տափակ վրձին մը (ֆրէշ). կարագի զանգուածներուն չըջագիծէն աւելի մեծիմակ ճերմակ և հաստըկէկ թուղթի կտորներ կտրուցէք. վրձինը չաքարջուրին մէջ թաթիւեցէք (երբ այս վերջինը քիչ մը պալի) թուղթերը աւելով օծեցէք. յետոյ կարագի կտորները աւելցնելով չարեցէք. բայց այնպէս որ, ամեն մէկ թուղթը չաքարջուրով օծելու պէս, կարագը վրան դնելու է. երբ այսպէս 15-20 կտոր պատրաստէք, առէք թուղթին մէկը, որու վրայ կարագը դրուած է. և այս անգամ կարագին երեսը արագութեամբ օծեցէք չաքարջուրով, և դրէք սեղանին վրայ, և հետզհետէ այսպէս շարունակեցէք, մինչեւ որ կարագը հատնի. միայն թէ, այդ միջոցին՝ նայելու է որ, չաքարջուրը չի պաղի, որ միշտ 60 աստիճանէն վեր ըլլալու է իր տաքութիւնը, կամ վեր ի վերոյ 70-75 աստիճան. ուստի՝ չի պաղեցնելու համար, գործողութեան ժամանակ կրնաք թողուլ մագմազ կրակի վրայ:

Այս եղանակով, երբ չաքարջուրը կարագին վրայ քսէք, կարագին երեսի խաւը կը հալի, չաքարջուրին հետ կը խառնուի, և պաղելով ջնարակի պէս փայլունութիւն մը կ'ստանայ, որով օղը չի կրնարով ներս թափանցել, երկար ատեն կարագը իր թարմութիւնը անվթար պահելով հանդերձ, ախորժեղի համ մ'ալ կ'ստանայ չաքարջուրին հետ խառնուելով:

Եթէ նախապէս կարագին մէջ, վերը յիշուած եղանակով քիչ մը ուռտական թթու խառնէք և յետոյ չաքար ջրով օծէք, խիստ երկար ատեններ կը դիմանայ:

Զի մոռնանք սակայն ըսելու թէ, չաքարջուրով օծուելէն վերջը՝ պէտք է պահել «չոր», «չոր» և «մութ» տեղ մը:

Դ. ԲՈՒԱՏ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԴԵՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

Մակարուծային

փոխանցիկ հիւանդութիւններ

ՓՏԱԽՏ (Flacherie, Պպկըն կամ Սիւմիկ հատթալը)

Այս արտադրութիւններուն ամենն ալ մէկտեղ և միեւնոյն ատեն, միեւնոյն թրթուրին վրայ չեն գտնուիր:

Կծիծներու և ողջ թիթեռնիկներու մարմնոյն մէջ, թրթուակները խիստ հազուադիւրս են. որովհետեւ, երբ միջասը փտախոտէ վարակուի, կծիծ և հետեւարար թիթեռնիկ չեն դած կը մեռնի. ըսել է՝ երբ կ'ապրի, հիւանդութենէն վարակուած չէ, և կամ հազիւ թէ վարակուած ըլլալու է: Թրթուրներու մէջ՝ յաճախ կը տեսնուին, և մանաւանդ անոնց, որոնք հիւանդութենէ ընկճուած, մեռնելու մօտ են, կամ մեռած: Երբ այս թրթուակները թրթուրին աղիքներուն մէջ կը վստան, այլ եւս աղիքներուն չըջապատ թաղանթը չի գործեր, և կը նմանի ապակեայ անշարժ խողովակի մը, որու մէջ ջարդուած տերեւներ լեցուած են. բաղալուած ման արտադրութիւնները, և ցնդուած կաղերը միեւնոյնն են. աղիքներու թաղանթները կը վթարին, իրենց առածգութիւնը կը կորսնցնեն, կը նեխին. թրթուակները կը ծակծկեն զանոնք, և կը տարածուին հիւսկէններուն մէջ, որ նոյնհետայն կը սեւան: Այդ ատեն թրթուրը կը մեռնի, իր մորթը կը կքի, և նեխումը խսկոյն կը տարածուի մարմնոյն ամեն կողմը, միեւնոյն ատեն թրթուակներն ալ առատօրէն կը տարածուին բաղալուած մարմնոյն մէջ:

Եթէ թրթուակները ուշ ծնին միջատին մէջ, այն ատեն չերամի որդը իր խողակը կը չինէ, բայց կծիծը սկստի մեռնի թերեւս խողակին մէջ: Կրնայ սակայն պատահիլ որ, կծիծը դիմադրէ, և թիթեռնիկը դուրս ելլէ, եթէ թրթուակներու բազմապատկումը շատ դանդաղօրէն յառաջ երթայ: Ահա այս բացառիկ կերպով է որ միայն թրթուակներ կը գտնուին թիթեռնիկներու մէջ, մինչդեռ մե-

առած և նեխած թրթուրներու մէջ գտնուած
ները սովորական են :

Խմորիտի աճումը աւելի դանդաղ է, և
թրթուրը չի մեղցներ. մանաւանդ՝ եթէ հի-
ւանդութեան վարակումը խոզակաշինութե-
նէն անմիջապէս առաջ՝ չորրորդ խորխացու-
մի վերջի օրերուն պատահի, որու միակ ախ-
տանիչը՝ թրթուրին տկարութիւնը, և ցա-
խերը ելնելու դանդաղութիւնն է, ինչպէս ի
վերեւ բացատրած ենք :

Որովհետեւ փտախտը երեւան կուգայ
աղիքներուն մէջ անմարսելի դարձած տերեւի
խմորումի մը հետեւանքով, ուստի պէտք է
միմիայն աղիքներուն մէջ փնտռել մանրադի-
տական տարրերը, որոնց վրայ խօսեցանք :

Համրիչաշար խմորիտը կը գտնուի միայն
կծիճին մէջ, և զննելու համար, պէտք է
գործողութիւնները ինամով և փափկութեամբ
կատարել :

Զննութեան ենթարկելի կծիճները առ-
նելով, նրբալիքտ մկրատով կտրտելու է,
վերէն դէպ ի վար հաշտելով՝ երկրորդ և եր-
րորդ անրակին մէջտեղէն. կամ վարէն դէպ
ի վեր հաշտելով հինգերորդ և վեցերորդ
անրակներուն մէջտեղէն : Յետոյ գտնելու է
կուրծքի առաջնակողմի մասին մէջ, ստամո-
քային կազմածը, ուրիշ՝ սուր հանելու է
գնդաձեւ փոքրիկ տուրակ մը, որ նախա-
պէս՝ երբ կծիճը թրթուր էր տակաւին, եր-
կայն և ընդարձակածաւալ կազմութիւն մը
ունէր : Այդ ստամոքային տուրակը ուշա-
դրութեամբ դուրս հանելու է, ինչ որ դիւ-
րին է. որովհետեւ՝ կծկուած աղիքը, վարի
կորովն մարսողութեան խողովակի կապուած
տեղէն մկրատով կտրտելով, ինչպէս և վերի
կողմէն ալ որկորի միացած տեղէն, բոլորովին
անջատուած կը մնայ գրեթէ, և սղտիկ ջան-
քով մը կարելի կ'ըլլայ դուրս հանել :

Առողջ վիճակի մէջ գտնուող կծիճի մը
ստամոքսին մէջ մնացած տերեւներու մնա-
ցորդները հետզհետէ կը կարծրանան՝ որչափ
կծիճը ծերանայ, և ռետինակերպ կազմու-
թիւն մը կ'ստանան. ինչ որ կ'արգիլէ, աղիք-
ներու մէջ անոնց նեխումը, որ՝ ինչպէս գի-
տենք այժմ, կծիճին մահուան պատճառ
կ'ըլլայ : Ասիկայ գիտնելով, աւելի աղէկ կ'ըլ-
լայ՝ եթէ քննութիւնը կատարուի, թըր-
թուրներու ցախերը ելլեցն 7-8 օր վերջը :

Որովհետեւ՝ այդ միջոցին, ստամոքային նիւ-
թերը քիչ չափ կարծրացած ըլլալով, գործո-
ղութիւնները կը դիւրանան : Երբ միջատը ա-
պառուջ վիճակի մէջ է, այն ատեն ստամո-
քային պարկին մէջ մեծ քանակութեամբ և
մոյգ կանաչ գոյնով պարունակութիւն մը
պիտի գտնուի, ինչ որ արտաբնական պիտի
ըլլար խոզակաշինութենէ առաջ, եթէ առողջ
վիճակ մ'ունեցած ըլլար : Վարժ աչք մը իս-
կոյն կը ճանչնայ հիւանդութիւնը՝ ստամոքս-
յին պարկի ծաւալէն, գոյնէն և կարծրու-
թենէն :

Մանրադիտական զննութիւնը կատարե-
լու համար, ստամոքային պարկը ուշադրու-
թեամբ հանելով, ապակեայ շեղբակի (lame
de verre) մը վրայ դնելու է : Ժամանակ չի
կորսնցունելու համար, կրնաք անմիջապէս,
քննութեան ենթարկելի բոլոր կծիճները
պատրաստել այսպէս հետզհետէ, որովհե-
տեւ՝ այդ պարկերու պարունակութիւնը վը-
թարելու վախ չի կայ : Գրեթէ աննեխելի վի-
ճակի մը մէջ կը գտնուի, և չորնալով զննու-
թեան մասին ալ ո և է արգելք մը յառաջ
չի գնար :

Պարկին չըջապատը կազմող կազուղ թա-
ղանքը քերելու է, և մէջի պարունակութե-
նէն գնդաձեւի խոշորութեամբ մաս մ'առնե-
լով, ապակեայ շեղբակին մէջ տեղը, փոք-
րիկ կաթիլ մը ջրով յարելու է. և նոյնպէս
ապակեայ՝ բայց խիստ բարակ շեղբակով մը
վրան ծածկելով, դնելու է մանրադիտակին
տակ, և հինգ կամ վեց հարիւր անգամ տը-
րամագծային խոշորութեան չափով փնտռե-
լու է խմորիտները :

Եթէ ստամոքսային պարկի շարունակու-
թիւնը եղող կուրաղի մասը քննութեան են-
թարկուի, որ այլ եւս կը ծառայէ միմիայն՝
և քիչ չափ միզական աղեր (sels uriques),
— ինչպէս ան շտորի միզատ (urate d'am-
moniaque) — պարունակող հեղուկները քաղե-
լու, զորս՝ թիթեանիլը դուրս կը հանէ, խո-
զակին մէջէն ելնելէն վերջ՝ պիտի տես-
նուի որ, այդ հեղուկը գորշ կամ սեւ թիթ-
բակ գոյն մը ստացած է, փոխտնակ դեղին
կամ նարնջագոյն երանգի, զոր պիտի ունե-
նար, եթէ միջատը առողջ ըլլար :

Այդ հեղուկը՝ իր այդ վիճակին մէջ, ան-
աւրելի կերպով ազո մը կը թողու հետո-

բուծութեան համար գործածուած, և հաւ-
կիթները սլարուհակող լաթերուն վրայ:

Տօքը. է. Վէռսոն նշանակած է նաև որ,
Մալիիկիի խողովակներուն մէջ մեծ քանա-
կութեամբ բիւրեղներ կը գտնուին, երբ շե-
րամբ փտախտէ վարակուած ըլլայ: Ասիկա
տարօրինակ բան մը չէ. որովհետեւ շերամը
չափ միջական հեղուկ կ'ալտադրէ, մասնա-
ւորապէս խորխորտիութեանց ժամանակ՝ իր
մորթի մակերեւոյթին վրայ: Բայց երբ մի-
ջատը ապառաղջ վիճակի մը մէջ գտնուի,
այն ատեն՝ փոխանակ այդ միջական հեղուկը
դուրս ելնելու՝ մարտողական գործողու-
թեանց տարապայման այլայլման պատճա-
ռաւ, ուրիշ և յառաջ կուգայ աղիքներու
մէջ գլխաւորապէս խմորումը՝ այդ հեղուկը
բիւրեղանալով կը մնայ այդ Մալիիկիի խո-
ղովակներուն մէջ: Եւ այն բարկաբոյր ցնդա-
կան ճարպային թթուութիւնները՝ որոնց վրայ
խօսած ենք արդէն, թէ շերամատան մը բու-
ծարաններուն մէջ իրենց ներկայութիւնը,
հաստատական և յատկորոշ նշան մ'է՝ փը-
տախտի գոյութեան, և յառաջ կուգան վե-
րոյիշեալ խմորումներու ատեն՝ ներուժներէ
յառաջ եկած անուշադրային բաղկացութիւն-
ներով եւս յագեցնալով, իրենց հանգամանքը
աւելի որոշիչ և արտայայտուն կ'ըլլայ այն
ատեն:

ՓՏԱԽՏԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Նա-
խապէս մեր ընթերցողներուն վրայ հիմնուելով փը-
տախտի ժառանգականութիւնը կրնանք հաս-
տատել ապահովապէս. և արդէն՝ 1868 ին՝
Մ. Բասթօնի փորձերը ամեն կասկած վե-
րուցած են այդ մասին: Փտախտէ վարակ-
ուած թրթուրներէ ծնած թրթուրները
առհասարակ իրենք ալ կը վարակուին. և
ասկէ զատ, փտախտէ գերծ թրթուրներէ
պատրաստուած հոնտերն ալ կրնան երբեմն
քիչ թէ չափ քանակութեամբ փտախտէ վա-
րակուած թրթուրներ արտադրել: Հարկ չի
կայ ըսել որ, այնպիսիներու գոյութիւնը կ'ա-
պացուցուի, երբ բուծարաններու վրայ տես-
նուին թրթուրներ, որոնք ցախերը ելնելու
ժամանակ վարանոտ գլորքի մը մէջ կը գըտ-
նուին: Ասոնց մանրադիտական զննութիւնը
երեւան կը բերէ միայն մարտողութեան խո-
ղովակի մէջ խմորման ներկայութիւնը,
բայց թրթուրներ չեն տեսնուիր:

Ահա այս պատճառաւ կծիծներու քննու-
թիւնը կրկնակ տեսակէտով օգտակար է. ո-
րովհետեւ՝ միւսնոյն անգամ թէ մարմնիկներու
ներկայութիւնը երեւան կուգայ, և թէ համ-
ընթացաբար խմորման նշաններու: Ճշմարտ է թէ և որ
փտախտի ներկայութիւնը նախապէս կրնայ
հասկցուիլ թրթուրներու դանդաղութենէն,
բայց պզգեղախտի (բէպոլի) գոյութեան մա-
սին այնպէս չէ. քանի որ ամենէն կայտառ
երեւցած թրթուրները՝ որոնք նախապէս և
ոչ մէկ վարակման նշան ցոյց կուտան, և
կ'արտադրեն մարմնիկներէ վարակուած
թրթուրներ, որոնք հնտաբուծութեան
համար ոչ միայն անյարմար, այլ մինչեւ իսկ
վտանգաւոր կը նկատուին: Ըսել է՝ պզգեղ-
ախտի ժառանգական տրամադրութիւնը նա-
խապէս անծանօթ կը մնայ, և վարակումը
մանրադիտակը երեւան կրնայ հանել. մինչ-
դեռ փտախտի ժառանգական տրամադրու-
թիւնը այնպէս չէ. թրթուրը առկաւին իր
խողովակը չի շինած, ընդհանրապէս կը ճանչ-
ցուի:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՓՏԱԽՏ. — Փտախտը կըր-
նայ նաև բացի ժառանգականութենէ, պա-
ռահական կամ սփռալային (sporadique) ալ
ըլլալ: Այսինքն հեռաւոր տեղերէ, կամ նոյն
իսկ մօտակայ շերեմատուներէ տարածուիլ՝
այլ և այլ պատճառներով. ինչպէս, հողմի-
րու և մասնաւորապէս հարաւային հողմի աղ-
ցութեան տակ. փոթորկալիւ օդերը, որոնք
յօրինուածային նիւթերը խմորելու տրամա-
մագիր կ'ընեն. իրարու վրայ դիզուած, գէշ
հովահրած և բարբոքած տերեւները. նոյն-
պէս մառախուղէ և ցօղէ թրջուած տերեւ-
ները. և մինչեւ իսկ մէկ տեսակ՝ կամ մէկ
տեղի տերեւը փոխելով, յանկարծ ուրիշ տե-
սակ կամ ուրիշ տեղէ եկած տերեւ կերցը-
նելով:

Վերոյիշեալ պատճառներուն վրայ աւել-
ցնելու է նաև շերամատան մէջ բուծարան-
ներու հաւաքախոնուումը. այսինքն թրթուր-
ներու իրարու վրայ խիտ խիտ խճողիլը, ար-
տաշնջման դադարումները, և խորխորտմի
ատեն՝ շերամատան տաքութեան աստիճանի
բարձրացումը: Վերջապէս՝ Մ. Բասթօն
կ'ենթադրէ որ՝ — ինչ որ արդէն ստուգու-
թիւն ալ է — ամեն տարի յօտուող (պուտա-
մաք) թրթուրներու տերեւները՝ փտախտը

սպասարկելու մասին մեծ դեր կը խաղան : Յօտեւել գործողութեան ազդեցութեան տակ՝ տարակոյս չի կայ որ խիստ առատ , լայն , թանձր և աւելի շատ կանաչանիւթ պարու- նակող տերեւներ կ'արտադրեն թթենիները , բայց դժբաղդաբար՝ նոյն իսկ իրենց այս ա- ռատ ելութիւններով դժուարամարս յատկու- թիւն մը կ'ստանան . հետեւաբար և մարսու- ղութեան խողովակին մէջ խմորելով , յառաջ կը բերեն փտախոր :

Խնայողական տեսակէտով է որ անշուշտ թթենիները կը յօտեն , քանի որ աւելի ա- ռատ տերեւ կ'արտադրէ , և քաղելու համար ալ նուազ ձեռնաշխատութեան վարձք կը վճարուի . բայց միւս կողմէ՝ քանի որ այդ կերպով ամրողջ շէրամատան հասոյթը վը- տանգի տակ կը գտնուի , աւելի խելացու- թիւն չըլլա՞ր այդպիսի անհիմն խնայողու- թիւն մը մէկ կողմ նետել , և գործածել վայրի թթենիի տերեւները , և կամ գոնէ , 5-6 տարին անգամ մը միայն յօտել , այն ալ յարգարելու համար ծառերը :

Յետոյ , տաճումը շատ կանուխ սկսիլ , որպէս զի՝ տաքերը չի կոխած , և տերեւները կարծրանալով դժուարամարսելի չի դարձած , դուք արդէն լրացուցած ըլլաք :

Ղ. ԲՈՒԱՏ

ՄԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔԵՐԵՆ

ԱՄԲԱԿՈՒՄ ԱՂԱԻ ԲԱՆԹԱԼՕՆԸ

[ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ]

Ամբակում աղա , միջահասակ , նիհար , ալեհեր , վաթսուկնոց ծերուկ մ'էր . ե- ռեսները դուրս ցցուած , թաւ պեխե- ռով , և մարած աչքերով , որոնցմէ կար- ծես իր խոնջանքը կ'արտացոլէր . ծե- րութենէն աւելի , չքաւորութիւնն ու աշխատութիւնը խոշոր խորշոմներ բա- ցած էին ճակտին վրայ . հանգիստը թ'նչ է չէր գիտէր , և մինչեւ այդ հասակին՝ անդուլ անդադար օրն ի բուն կ'աշխա- տէր իր ընտանիքը ապրեցնելու համար : Ընտանեւէր , գործունեայ , միանգամայն

համակերպող էր . ինք թէև դպրոցի ե- ռես տեսած չէր , բայց գովելի փափա- քով մը ջանացած էր իր տղաքը՝ մանչ և աղջիկ մը՝ թաղին վարժարանը դրկել , որոնք՝ դպրոցի մէջ իրենց ստացած դաս- տիարակութիւնով մէյ մէկ անամիս ի- մաստակներ դարձած էին , և տունը՝ իրենց մօր օրինակին հետեւելով՝ մէյ մէկ անկիրթներ : Երբ խեղճ հայրիկը ի- րենց խրատ մը տալու կ'ենէր , կը պա- տասխանէին . « քուկին խելքդ անանկ բաներու չի հասնիր , հիմա հին ժամա- նակները չէ » :

Իր կինը Աննիցա հանում , տանը մէջ իր շխտութեան հովերով կը փայլէր . կարգ կանոն ըրուած բանը չի կար . չէնք չնորհք կերակուր , օր մը սեղանին վրայ ելած չէր . կամ էրած կ'ըլլար , կամ ա- ղը պղպղղը պակաս , կամ կատուն միւր կերած՝ և կամ թերխաչ : Վերջապէս խեղճ մարդը օր մը օրանց բերնի համով կերակուր մը կերած չէր սեղանին վրայ : Ընտանեկան հաճոյքը թ'նչ է չէր վայե- լած երբեք . երբ տակաւին զաւակները փոքր էին՝ ամեն օր , ամեն իրիկուն ան- հատնում տրտունջներով՝ խեղճ մարդուն հանգիստը կը վրդովէր Աննիցա հանում . ամեն ատեն մէյ մէկ պակասութիւն կը գտնար և ամուսնոյն երեսին կը զարնէր , և այն յաւակնութիւնն ունէր որ , այդ մարդը իր արժանիքին հաւասար ամու- սին մը չէր , որովհետեւ ինք սօկեղիչ Գաբիկ աղային աղջիկն է եղեր : Իր այս վարմունքներով զաւակներն ալ իրենց հօրը դէմ դարձուցած էր : Երբ խեղճ մարդը , օրուան ծանր աշխատութիւն- ներու տակ ընկճած , հեւ ի հեւ տուն դառնար , փոխանակ զինքը պատուելու , մեծարելու , և աշխատութենէ բրտացած ձեռները համբուրելու , արհամարհան- քով կը նայէին իրեն , և կ'ըսէին . « այդ ալ արհ'ստ է որ ընտրեր ես , ամեն օր մուրերուն կուրերուն մէջ տուն կը դառ- նաս . թո՛ղ սարաֆ ըլլայիր , փաճառական ըլլայիր , որ մենք ալ պարծենալու տեղ

մը ունենայինք. օ՛հ, հիմա քաշէ որ երթաւ սորվիւ»

Երեւակայեցէք թէ՛ ի՞նչ կ'զգայ նոյն վայրկեանին մարդ մը, և ի՞նչ աշխոյժ կը մնայ այլ եւս իր վրայ, ի՞նչ սլո՛՛ կրկին աշխատութեան. խեղճ մարդուն ջիւղերը կը տկարանային, հոգեկան մեծ տանջանքի մը ենթարկուած, իր կորովը պակասած կ'երթար անկիւն մը կծկափլ, և իր մտածումներուն մէջ թաղուիլ, մինչեւ որ հաճէին սեղան մը պատրաստել, և այն ալ ի՞նչ սեղան... մին միւսին հրամայելով. մայրը աղջիկը անիծելով, աղջիկը մայրը անտատելով, հազար լուտանք մէկզմէկու գլխու տեղալով, և իր յանկերգ, մայրը իր վրէժը կը լուծէր, իր լուտանքներէն ամուսնոյն ալ բաժին հանելով. առանց իսկ մտածելու թէ՛ անոր շնորհիւն էր որ սեղանին վրայ հաց մը պիտի գտնային ուտելու, ապերախտ նե՛րը:

Իր տղան՝ Գարեգին, դպրոցէն ելնելէն վերջ, կը փափաքէր վաճառականի մը քով մտնալ. չէր հանդուրժեր որ իր բարձր ուսմունքով... հօրը պէս դարբին կամ երկաթագործ ըլլայ, առանց գիտնալու թէ՛ աշխարհիս վրայ գէշ արհեստ չի կայ. պատուաւոր և բարեկիրթ մարդը կը բարձրացնէ զայն, թէ՛ մարդ միայն իր յարասու ջանքերով և պարկեշտութեամբ կրնայ ուրիշներու համակրանքը վայելել, և հաց մը ուտել հանգարտօրէն և կուշտ փորով: Յառաջ գիմութիւնը, հարստութիւնը մարդ ամեն արհեստի մէջ ալ կրնայ ձեռք բերել, քիչ մը արհեստին «վարպետը» ըլլալով՝ զայն գործածել գիտնայ, և քիչ մ'ալ բաղդը օգնէ իրեն. յետոյ՝ տունէն ներս ալ կ'ինը անոր աշխատութիւնները բաժնէ, օգնէ անոր, և իր խնայասիրութեամբ, անաշէն յատկութիւններով ամուսնոյն ճակտի քրտինքը աճեցնէ, շահաբեր ընէ: Ահա՛ բան մը՝ որ մեծ մասամբ մեր ընտանիքներուն մէջէն կը պակսի.

և փոխանակ իրենց ամուսնոյն օգնական նեցուկ ըլլալու, իրենց շուտը թիւններով շատ անգամներ անոնց կործանման պատճառ կ'ըլլան. ինչո՞ւ այսինչը սպասուհի ունենայ, իրենք չունենան. ինչո՞ւ այնինչը սանկ գլխարկ մը դնէ, ինք չի կրնայ դնել. ինչո՞ւ, ինչո՞ւ, և անհատնում ինչո՞ւներ:

Գարեգին կը ծիծաղէր այն երկաթագործներու, դարբիններու, կօշկակարներու և ասոնց նման արհեստաւորներու վրայ, որոնք՝ իրենց յարասուութեամբ և վարպետութեամբ մէյմէկ բարեկեցիկ խանութպաններ եղած են, և որոնց շնորհիւ ալ, մէկ քանիներ իրենց ապուսար կը ճարեն:

Արդեօք արհեստն է՝ որ մարդը կը սորվացնէ, չէ թէ՛ անկրթութիւնը կամ յաւակնտաութիւնը իրենց ես ին մէջ ամփոփուած՝ արհեստին հետ մէկտեղ ըստըրկութենէ սորկութիւն կը գահավիժին. տեղը չէ՞ ըսել, «մարդ է որ գործէ զերկիր»։ Ինչո՞ւ արհամարհենք արհեստները. եթէ ամենքնիս մէյմէկ վաճառական կամ փրիլիտիայ ըլլայինք, արհեստաւորը մ'վ պիտի ըլլար. չէ՞ մի որ ամենայետին հիւսնը անգամ ընկերականութեան օգտակար մէկ անդամն է. առանց անոր մեր բնակարանը ի՞նչպէս պիտի կրնայինք շինել, ուր ցրտէն ու տաքէն կը պատսպարուինք, և հոն մեր հանգիստը կը գտնենք:

Այսպէս Գարեգին բաւական ստեն աստ անդ գեղերելէն վերջ, հառած էր իր նպատակին, վաճառատան մը մէջ ծառայութեան մտնելով. 1-2 տարի շարունակելէ վերջ, սկսած էր այլ եւս «աղջիկ փնտռելու» ելնել. թէ և հայրը պահ մը հակառակած էր տղուն զաղափարին, բայց վերջապէս տեղի տալ պարտաւորեցաւ տղուն ըմբոստ կամքին առջեւ. և երկրորդ կը մտածէր որ՝ թե բեւս պարկեշտ և խոհեմ հարս մը գիմացը կ'ընէ, և իւր վիշտերը կ'ամուրէ:

Բայց մայրը՝ բնական բերամար, բոլորովին կը հակառակէր տղուն գաղափարին, և կը ջանար միշտ առաջըր առնել:

Աղջիկը՝ Թագուկ, իր մասին բնական ուղեր որ եղբայրը իրմէ առաջ ամուսնանայ, և հօրը համոզելու խօսքերը, մօրը հակառակութիւնը՝ Թագուկի փափաքներուն շատ նպատակայարմար կուգային: Ի՞նչ, Գարեգին իրմէ առաջ ամուսնանար, և ամեն մէջ գլխու փորձանք հա՛րա մը բերէր, ո՛հ, կարելի բան չէր. նախանձէն կը պայթէր այդ ատեն:

Այս միջոցին էր որ, էլմաստ տուտու, Գարեգինին նպատակը իմանալով, իսկոյն այդ նպատակին մէջէն իրեն հաց մը եղնելու հաւանականութեան վտուտ, շունչը կ'առնէ յիտակ Աննիցա հանըմին տունը. և իր «խլափուղական» ճարտար պերճախօսութիւններով, կը յաջողի համոզել Աննիցա հանըմը, վտահեցնելով զինքը թէ՛ միևնոյն ատեն Թագուկին համար ալ շնորհքով փեսացու մը պիտի կրնայ դառնալ, եթէ իր ճանչցած այսինչ աղջիկը՝ Գարեգինին տունը ուղէ, որու ազգականներէն մէկն ալ իրեն յարմար շնորհքով աղջիկ մը կը փնտռէ: Ալ ասոր ըսելիք չի կար. Թագուկը պիտի ամուսնանար, իր մօրը միակ տենջանքը իրագործուած պիտի ըլլար. ասկէ անդին ի՞նչ կ'ուզէր:

Թագուկն ալ իր կարգին, երբ կը տեղեկանայ թէ՛ եղբորը ամուսնանալովը իր բողբոն ալ պիտի շինուի, լռիկ մընջիկ համակարծիք կը գտնուի: Ամբակում աղան ուրիշ բան չէր մնար այլ եւս, բայց եթէ համակերպիլ: Ալ որոշուած էր. էլմաստ տուտու 1-2 օրէն լրբը պիտի բերէր:

Դոր

ԼԵՐՄԻՆԷ

ԽՈՇԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ԹԻՒՆԻԿ (ՈՒՍԿՈՒՄՐՈՒ)

Հիմա թիւնիկին ճիշտ եղանակն է սովէ կը պատաստուին իրտո համեղ կերակուրներ. ինչպէս են տեղական (տօրման) և յիւ. ես ձեզի պիտի բացատրեմ, սիրելի ընթերցողներս, 1-2 տարբեր տեսակներ, որոցմէ կարծեմ թէ՛ իրտո գոհ պիտի մնաք, եթէ գրուածին պէս պատրաստելու ձանձրութիւնն առնէք:

Այս ձուկին միտը թէ և անդարար, անկոյն միևնոյն անգամ ծանր և բաւական դժուարամար է. ասոր համար համեմատով պէտք է եփել, և այն ալ շատ ունեւորէ:

ՄԱՐՍԻԼԻԱԿԱՆ ԹԻՒՆԻԿ

Ահաւասիկ ձեզի սքանչելի, ընտիր և համեղ կերակուր մը: Զուկերը սովեցէք, լրացէք և պարզուտի (քէփկիր) մէջ լեցուցէք որ ցամքին. գլուխները և պոչերը կտրուելով նետեցէք. եթէ ձուկերը մանր են, 3 կտորի՝ խի եթէ մեծ են՝ 4 կտորի բաժնեցէք և աղեցէք: Տոպակի մը մէջ քիչ մը ձէթ լեցուցէք ու թեթեւ կերպով տապկեցէք: Ուրիշ ամանի մը մէջ, դգալին ծայրովը լոլիկի թացան (սալցա) տունելով քիչ մը ջուրի մէջ հալեցուցէք. պտուղնց մը ուրց (քէքէք), քանի մը դափնիի (թէֆնէ) տերեւ և պտուղնց մը պղպեղ աւելցուցէք: Զատ ամանի մը մէջ քիչ մը կարագ լուղ գնելով մէկ երկու դգալ ալիւր լեցուցէք ու խորովեցէք, քիչ մը մսի ջուր աւելցուցէք ու քթքթացուցէք. յետոյ պատրաստած լոլիկնիդ վրան լեցունելով կրկին քթքացուցէք, և այդ համեմեալ ջուրէն 2-3 դգալ (կամ աւելի, ձուկին քանակութեան համեմատ) ձուկերուն վրայ լեցուցէք, նոյն քանակութեամբ սոխածի խիւս (*) (այս հա-

(*) Խոշորիկէկ սոխ մը մանրեցէք, կարագ լուղի մէջ սոխորած ըրէք, առանց կտրամրցնելու, և քիչ մը ալիւր ցանեցէք. քիչ մը լոլիկի թացան և 1-2 դգալ մսի ջուր աւելցնելով եփեցէք. լեցուցէք պարզուտի մը մէջ և ձուկեցէք, այնպէս որ խիւսի (մաճուն) վերածուելով, պարզուտին ծակերէն փար լինայ. որ կըլլայ սոխորածի խիւս:

մեմեալ թաղանթները, կրնաք նաև ուրիշ կերակուրներու ալ դորձածել), խիստ մանր ջարդուած աղատգեղ, պճեղ մը ծեծած սխտոր, և ալ պղպեղ, այս ամենը թեթեւ կրակի վրայ եփեցէք: Հրամցուցած ատեննիդ լիմոն մը քամեցէք, կամ քիչ մը քաղցախ լեցուցէք:

ՍՈՒՆԿՈՎ ԹԻԻՆԻԿ

2 հատ թարմ թիւնիկ ստեղծէք, լուսնէք, ամանի մը մէջ դնելով՝ քիչ մը պղպեղ ու քիչ մ'ալ պղպեղ ցանեցէք, և կըրակին վրայ դրէք: Եւստիսն պէս ծակողկէն շերտիով մը հանեցէք ձուկերը և կտաւի մը վրայ դնելով չորցուցէք, գլուխը և պաշը կտրուեցէք, մասերու բաժնեցէք, և պղտիկ ափսէի մը մէջ շարեցէք, ու վրան ջարդուած և եփած սունկ (որքան որ ուզէք), քիչ մը աղատգեղ և քիչ մ'ալ կարագ և ալ աւելցուցէք: Կամոց փուռի մէջ եփեցէք, հրամցուցած ատեննիդ լիմոն մը քամեցէք, և միեւնոյն ափսէով դրէք սեղանը:

ԽՄՈՐԵՂԵՆՆԵՐ

ՃԵՆՈՎԱԿԱՆ ԾԱՂ (ԺԵՆՈՒՍԱՅ)

Դաշխուրանի (կիւմէճ) մը մէջ լեցուցէք 25 տրամ ալիւր, նոյնչափ խիստ բարակ ծեծուած և մազուած շաքար, լիմոնի մը արտակեղեւը՝ որ պէտք է քերոցէ անցունել. 2 հաւկիթ ամբողջ, 3 հաւկիթի դեղնուց, ապուրի դգալ մը նարնջի ծաղկեջուր, 25 տրամ հալած կարագ, 20 տրամի չափ ծեծած նուշ, (ծեծած ատեննիդ մերթ ընդ մերթ հաւկիթի ճերմկուց սրսկեցէք), աղէկ մը զարկէք փայտէ գգալով մը այս խմորը, մինչեւ որ հաւասարին, ու յետոյ 30 հարմեթը մեծութեամբ թղթերու վրայ դնելով կամոց փուռի մէջ եփեցէք:

Երբ դուրս հանէք փուռէն, մասերու բաժնեցէք, և կրկին խիստ կամոց փուռի մէջ չորցուցէք:

ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿ

Ստիւում 40 տրամ նուշը ծեծեցէք, մերթ ընդ մերթ կէս հաւկիթի ճերմկուց սրսկեով, Դաշխուրանի մը մէջ լեցուցէք 80 տր-

ամ ալիւր, նոյնքան փոշիացած և չարճաղէ անցած շաքար, և 6 հաւկիթ ամբողջ. 5 վայրկեան խառնեցէք այս ամենը, և աւելցուցէք 80 տրամ հալած կարագ. կրկին զարկէք 5 վայրկեանի չափ այս խառնուրդը, որ աղէկ մը հաւասարին: Այժմ լեցուցէք 2 ապուրի դգալ մրգովի կամ գօնեաք, և լիմոնի մը արտակեղեւը, որ պէտք է քերոցէ անցունած ըլլայ: Իւրաքանչիւր կողմը 30 հարմեթը մեծութեամբ թղթի մը վրայ տեղաւորեցէք խմորը.—թուղթը պէտք է առաջուց իւղտուել— և խիստ կամոց փուռի մէջ եփեցէք: Յետոյ զարդարեցէք հետեւեալ սառուցով, (glace): Դաշխուրանի մը մէջ դրէք, 75 տրամ շաքար, (չարմաղէ անցունած) և քիչ քիչ հաւկիթի ճերմկուց լեցնելով՝ փայտէ գգալով մը զարկէք. երբոր շաքարը աղէկ մը հաւկիթի ճերմկուցին հետ յարի, այն ատեն 2-3 դգալ փաթաթէսի ալիւր ցանեցէք և կըրկին խառնեցէք:

ՀԱՒԱԼԱՆՁ (ԹԱՎՈՒԳ ԿԵՌՄՈՒԻ)

3 հաւի լանջքը խառնեցէք քափի մը ջուր լուսնէք, կտաւի մէջ դնելով չորցուցէք, թեղ թեղ բաժնեցէք իրարմէ. և բրինձի ալիւրի մէջ թաթխելով՝ շփեցէք այդ թեղերը ձեր երկու ափերուն մէջ —ասով թեղերը դիւրութեամբ կը զատուին իրարմէ— Դրէք սանի մը մէջ, և քիչ մը կտրով յարեցէք. աւելցուցէք 3 սխա կաթ, շաքար, և 150 տրամ բրինձի ալիւր, և անընդհատ խառնելով եփեցէք մինչեւ երկուքուկէս ժամ, յետոյ կէս ժամու չափ մազմաղ կրակի վրայ դնելով մերթ ընդ մերթ խառնեցէք, և քիչ մ'ա վարդի ջուր աւելցնելով պնակները քաշեցէք:

ԼԵՂԻ ՆՈՒՇԻ ՔԱՔԱՐ (ՏԵՂԱԿԱՆ ԱՃԸ ՊԱՏԵՄ)

225 տրամ լեղի նուշը տաք ջուրի մէջ ձգելով, կեղեւները հանեցէք, և քարէ սանդի մէջ, 3-4 հաւկիթի ճերմկուցով —պէտք է առաջուց փրփուրքներ— աղէկ մը ծեծեցէք, սակայն նայեցէք որ իւրը դուրս չի տայ: Դաշխուրանի մը մէջ լեցուցէք 380 տրամ ծեծած և մաղէ անցունած շաքար, նըշախուռն հաւկիթը վրան աւելցնելով խառնեցէք, մինչեւ որ հաւասարին. եթէ երբեք

խիստ թանձր ըլլայ. կրնաք փրկիցուած հաւ-
կիթի ճերմկուց աւելցնել, պէտք է զխանայ
թէ՛ միջին թանձրութիւն մը ունենալու է:

Ընկոյզի մեծութեամբ առէք այժմ ատիկէ
և թղթերու վրայ շարեցէք հետզհետէ, և կա-
մաց փուռի մէջ եփեցէք: Անուշ նուշով (տիշ
պատէմ) ալ այսպէս կը պատրաստուի, մի-
այն թէ պէտք է 250 տրամ չաքար գնէլ,
փոխանակ 380 տրամի:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԵ.

Հանրագիտակի 42րդ. թուով առաջար-
կուած ԻԴ. Խնդրոյն ջրամբարը շինելու հա-
մար ո՛րչափ ծախք կ'երթայ, գիտնալով որ,
ամբողջովին դետնին մէջ պիտի շինուի, այն-
պէս որ վրան՝ գետնի մակերեսին հետ հարթ
հաւասար ըլլայ, ամեն կողմէն, յատուկ ու
վրան ալ միանգամայն պատերը 0,6 մէթր
հաստութիւն պիտի ունենան. մէկ խորա-
նարդ մէթր հողը 12 զրշ.ով կը վերցուի, և
մէկ խորանարդ մէթր պատն ու 120 զրշ.ով
կը շինուի: Տ. ՊՕԶԱՅԵԱՆ

ԼՈՒԾՈՒՄ ԻԱ. ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ

Բազմապատկութեան ազիւտակի մը մէջ
մեծագոյն թիւը կը պահանջուէր, զոր ըւ-
ծած է միայն և բաւական յաջողակութեամբ,
Օր. Փայլածու Տումանեան, Ատաբազարի
Հայուհեաց վարժարանի ուսանողուհիներէն.
Թէ և մէկ երկու ներելի փոքր սխալներ ու-
պրդած էին: Պատասխանն է 324:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ'ըսուի թէ Նուպար փաշա երեք միլիոն
Փր. կտակեր է Հայ կարօտեալներուն և որ-
բերուն. կտակին գործադրութիւնը թողուած
է իր որդւոյն՝ Պօղոս փաշայի: Ուրիշ մանր մունր
կտակներ ալ ըրած է իրեն ծառայողներուն:

Իրիէ թաշակ ընդունող պաշտպանեալներուն:
Սակայն դեռ պաշտօնական բան մը չկայ.
այս ամէնը զրոյցներ են միայն:

Եւրոպական Մամուլը մեծ գովեստով ու
համակրանքով կը խօսի Նուպար փաշայի դի-
ւանագիտական ու վարչական բարձր կարո-
ղութեանց մասին, Արեւելքի է՛ն մեծ դի-
ւանագէտներէն մին նկատելով զայն: Ոմանք
«Արեւելքի Քավուր» ամսագրը կուտան Նու-
պար փաշայի: Նուպար փաշայի մարմինը,
յատուկ կառավարով Մարտիկեա փոխադրուե-
ցաւ, և հոնից շոգենաւ դուռեցաւ Եգիպ-
տոս տարուելու համար: Յուզարկաւորութիւնը
պիտի կատարուի Ս. Մնուղի ութօրէնքին,
13 յունուար: Գահիրէ, Ալեքսանդրիա, Մար-
տիկեա, Բարիզ և Լոնտոն Հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի. Լոնտոնի մէջ
դամբանական պիտի խօսի Անկլիքան վար-
դապետ մը, որ մօտէն ճանչցած է Նուպար
փաշան:

Նուպար փաշա իր կեանքի պատմութիւ-
նը գրած է Ֆրանսերէն լեզուով, զոր իջ ու-
ղին՝ Պօղոս փաշա մտադիր է հրատարակու-
թեան տալ:

— Պ. Մանթաշեանց քարիւղի համբաւա-
ւոր Հայ գործարանատէրը, 22 միլիոն ռուպ-
լի ծախսեր է իր գործատունը, Բեդրապուրի
դրամատէրներու խմբակի մը: Զ. Պ. Մանդաշ-
եանց ինք պիտի մնայ տնօրէն, բաժնետէր
ըլլալով հանդերձ:

— Մալիէէն 10000 զրշ. ալ յանձնուեցաւ
Պատրիարքարանի, գաւառացի կարօտեալ-
ներուն ի նպաստ՝ 100000 զրշ.ին ի հաշիւ:
Ասկէ առաջ յանձնուածներուն գումարը կը
հասնի 60000 զրշ.ի:

— Նոր Նախըւեանի մէջ պիտի սկսի հրա-
տարակուիլ հայերէն հանգէս մը, որ ընդ
պիտի տեսնէ տարին երկու անգամ, և ըն-
դարձակ ծաւալ պիտի ունենայ:

— Խարբերդէ և Տիարպէքիւրէ Պատրիար-
քարան հասած նոր նամակներ կը պարզեն
կարօտեալներու աղքատ վիճակը, և առ այս
դարման կը խնդրեն: Ս. Պատրիարք Հայրը
Բ. Դրան գիւմելով՝ Կայս. Կառավարութեան
գութը հայցեր է այդ աղքատներուն համար:

— Տփլիսի հայերէն թերթ մը կը յայ-
տարարէ թէ վերջացող տարուան մէջ 800
ոսկիի բաց մը ունի: Ուրիշ շաբաթաթերթ մը

նոյնալէս կը գանգատի ժողովրդեան անտարբերութեան նկատմամբ թէ՛ պէտք եղած կերպով չի քաջալերել զինքը։ Այդ հաշուով մենք, Տաճկահայերս, չառ առելի ընթերցանէր ենք։

— Առաջիկայ կրնանք հոգեհանգստեան պնդումն պիտի կատարուի Մայր-եկեղեցիի մէջ, Նուար փաշայի հոգուն համար։

— Կը լսենք թէ՛ Գրիգոր էֆ. Գարահեօղեան, Ագարեան Գերդաստանին հետ բանակցութեան մտած է, Բերայի պողոտային վրայ գտնուող Պազար Ալմանի շէնքը 13000 ոսկիի գնելով, իր կալուած նուիրել իր շինելիք Որբանոցին։

— Անցեալ շաբթու թերթս տպագրութեան յանձնած էինք, երբ ցաւ ի սիրտ իմացանք թէ՛ մեր Սերաստիայի Գործակալ Յակոբ էֆ. Գարակէօղեան հանգեր է ծաղիկ հատակին մէջ։ Ողբացեալ ուսուցիչը համակրելի դարձած էր իր անվատ աշխատութեամբ ու տոկուն նկարագրով. արդիւնաւորապէս կը վարէր Սերաստիայի Որբանոցը։ Յուզարկուորութեան օրը ընդհանուր առգի օր մը եղաւ Սերաստացիներուն համար. իր սիրական որդերն ու քաղերն հայ ժողովուրդը յուզուած՝ իր դադաղին կը հետեւէին։

— Ս. Պատրիարքը հինգշաբթի օրը Ղալաթիոյ եկեղեցին քարոզ խօսեցաւ Յովհաննէս Մկրտչի նօսին առթիւ։ Յետոյ այցելեց Ազգ. Կեդր. Վարժարանն ու նախակրթարանը, և աշակերտներուն ուսման վիճակը անձամբ քննեց։

— Պատրիարքարանը 200 ոսկի խրիկեց Վանի և Ալթամարի թեմերուն, կարօտեալներուն բաշխուելու համար։

ԳԱՂԻՐԵՑԻՆԵՐՈՒՆ

Գաւաթ մը տաք թէյ, ուրիշ ու է ըմպելիքէ առելի մարդուն ծարուր կ'անցնէ և կը զովացնէ. ուստի՝ երբ չափազանց ծարուած ըլլաք, փորձեցէք զայն անցնել տաք տաք գաւաթ մը թէյ խմելով։ Անգղիացիք բաշխանալով թէյի այս օգտակար յատկութիւնը Գահիրէի պէս տաք երկիրներ գտնուած ա-

տենին, ուրիշ ու է ըմպելի չեն գործածեր զովանալու համար։ Արդէն՝ Ծայրագոյն-Արեւելքցիները տաք եղանակներու մէջ զովանալու համար տաք ջուրի լոգանքներ կ'ընեն. և թէյատուներու մէջ ալ, ամեն յաճախորդի քով ամանով մը ջուր և անձեռոց մը կը դրուի, զոր ջուրին մէջ թաթխելով, կը սըրբուին, զովանալու համար։

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ էֆ. այս անգամ Գահիրէի մէջ թէյի վաճառանոց մը հաստատած ըլլալով, կուգայ Արգոյ հասարակութեան յայտարարել թէ՛, ամեն միջոց ձեռք առած է իւր Պատ. յաճախորդները գոհացնելու համար։

Գ. Իսագուլեան էֆ. ի վաճառատան մէջ կը գտնուին, Պոլսոյ հանրածանօթ Կ. Եալրուեան և Յ. Իսագուլեան էֆ. ներու վաճառատան ամեն տեսակ ընտելեցուցն թէյ-յերը, և կը ծախուին միեւնոյն գներով։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կոտորադրէ միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու դիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց հանձնար։

در علیاده بفچه قوسنده اسکی ضبطیه ده
۱۹ نومرو لی دکانه «مجموعه علوم» غزیه سی
سر محرری (بولاد) افدی به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու.

Աթապոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zaptié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

Բիւզանդիոնի միջոցաւ Ձեր զրկած 112 ու 1/2
զուրուշը: Մ. Ազնաւորեան էֆ. թերթերը
կը զրկուին, բայց ասիէ վերջը Ձեր ծրարին
մէջ կը դնենք:

Չորրու. — Ա. Հայրիկեան էֆ. — Ստա-
ցանք Տիւլեան էֆ. է 50 դահեկան:

Թիւրքիոյում. — Գ. Գլըճեան էֆ. — ասա-
ցած ենք Ձեր վեցամսեան:



Թ Է Յ Ը

ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԸՆՏԻՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Չինաստանցիք թէյը կը պատրաստեն
նոյն ինքն խմուած գաւաթին մէջ, հե-
տեւեալ կերպով, զոր կը յանձնարարենք
մեր ընթերցողաց իր գիւրութեան և օգ-
տակարութեան համար:

Գաւաթին մէջ կը դնեն նախապէս
պտղունց մը թէյ, եռացած ջուրը վրան
կը լեցնեն, և խսկոյն գաւաթին տակի
պնակը վրան կը ծածկեն, անշուշտ շա-
քարը դնելէ յետոյ. թէև Չինացիք թէյը
առանց շաքարի կը գործածեն: Թէյի
լեռաթուրմը պատրաստուած կ'ըլլայ,
երբ տերեւները գաւաթին յատակը իջ-
նան: Չի մոռնանք ըսելու թէ՛ Չինացիք
երբ այս կերպով կը պատրաստեն իրենց
թէյը, առանց պնակը գաւաթին վրայէն
վերցնելու, մէկ եղերքէն կը խմեն, որ-
պէս զի հստը մէջը մնայ:

Կ. Իսվրուեան և Յ. Իսաղուլեան
Տեւրոյ վաճառատան մէջ ծախուած թէյ-
յերը Արդոյ հառարակութեան մասնաւոր

ուշադրութեան կը յանձնենք, որոնք
հրապարակը գանուածներուն մէջ, իրենց
տեսակի աղնուութեամբ և գիներու տ-
ժանութեամբ անմիջեղի եղած են: Կեղ-
ծերէն զգուշանալու համար, գիմեցէք
ուղղակի Ընկերութեան Կեդրոնատեղին,
Կ. Պոլիս, Ճեւալ-Պէյ խանի տակ, 10 թիւ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոչոյ և Գաւառաց հաւաք	
Հանրագիտակ տարեկան	50 դր.
» վայելչազարդութեան	
բաժինով	80 »
Հանրագիտակ միայն վայելչազարդու- թեան բաժին	60 »
Հանրագիտակ վայելչազարդութեան բաժին գունաւոր և մեծադիր 36 պատկերներով	110 »

Արտասանանի հաւաք

Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» վայելչազարդութեան	
բաժինով	20 »
Հանրագիտակ միայն վայելչազարդու- թեան բաժին	16 »
Հանրագիտակ վայելչազարդութեան բաժին գունաւոր և մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅՆԵԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրացեալ Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Եփի-Չապրիէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչազարդութեան բաժնին
և
.

Ստորագրութիւն
(Ընթերցիչ)

1898

Բնակութեան տեղ
Հասցէ

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԻ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ վճարք մը, յարմար գներով. Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններուն ինքն ինքն և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք զաւառաց համար, որոնց

կը զրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՑ և ԱՆԻԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի նորվէկիայէն բերել տրուած ամենալաւիկ ձկան իւղի տեսակներ, Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գներով:



ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԴԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Ստիրիչեան
Արաբկիւր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզում — Եգ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարաթեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտակեան
Մալխարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաբեան
Խարբեղ — Խոսրով էֆ. Բէշիչեան
Թրեպոլի — Գալուստ էֆ. Դըլլճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրառն — Արմենակ էֆ. Սօմունճեան
Կարս — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Էրզրում — Էրզրում
Մանիս — Յակոբ էֆ. Բուրաթեան
Խանսար — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Տրապիզոն — Սահակ էֆ. Էթմէճեան
Արթուր — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Դարա-Հիսար — Արտաշէս էֆ. Հալպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար
Մագրի-Դիւղ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը,
Դատը-Դիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Դեմ փոփոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: